

ամէնէն նոր փորձերն են:

Հայոց քարոյական կեանքի վրայ յայտնուող այս սարսափելի աւերումներ, իրենց այլ եւ այլ կերպարանքին տակ, տխուր խորհրդածութիւններու կտաննն ազգի վիճակին իրաւի ծանօթ մտքերը եւ սեղմող յուզումներու մէջ կ'ըրդովնն անկեղծ սրտերը:

Ի՞նչի վերագրենք այս սարսափելի անքարոյականութիւնները. կրթութեան թէ դաստիարակութեան. անտեսագիտական պայմաններո՞ւ թէ շահախնդրական նկատումներու, որք կոսկեզօծուին ամէնէն նուիրական սկզբունքներով:

Ն ե ր ս է ս

ՆԻԿՈՒԱՅ ԱԼԵԿՍԵԵԻԻՉ ՆԵԿՐԱՍՈՎ.

(Մահուան քսան և հինգամեակի առթիւ)

1877—1902.

Народъ! народъ! Миѣ не дано геройства
Служить тебѣ, — плохой я гражданинъ...
Люблю тебя, пою твои страданья.

Я призванъ былъ воспѣть твои страданья,
Терпѣнъемъ изумляющій народъ.

Н. Некрасовъ.

Անցեալ գեկտեմբերի 27-ին լրացաւ ուսս յայանի բանաստեղծ Նիկոլայ Նեկրասովի մահուան քսան և հինգամեակը և այս երեւոյթը աննկատելի և լուկեայն շանցաւ այն ժողովրդի կողմից, որի անհուն վիշաբ, սրտի ցաւերն ու խոր վերքերը այնպէս աղղու կերպով երգել, իւր բանաստեղծութեան նիւթ էր դարձրել քսանօրդ դար առաջ գերեզման իջած բանաստեղծը և այնքան համարձակ բողբել այդ ժողովրդի ծով ասնջանքների և անվերջ առատականքների դէմ մի անդամ էլ յիշուեցաւ Նեկրասովը և նորա անուան ու յիշատակի հետ

կապուած ասնախմբութիւնները ցոյց տուին որ քսան և հինգ տարի առաջ բանաստեղծի գին յուզարկաւորող երիտասարդ մարդկանց ահագին բաղմունքիւնը միմիայն զգացմունքով չէր առաջնորդուել, երբ իւր երախտագիտութիւնն ու խորին յարգանքներն էր ցոյց ապիս հանգուցեալին, այլ և գիտակցաբար, ազգին և հայրենիքին նորա մասուցած գնահատելի ծառայութիւններն ի նկատի ունենալով, համոզուած՝ որ նորա գերը անպայման օգտակար և բարի է եղել ուսս ազգի յառաջագիւնութեան և հայրենիքի բարենորոգութեան գործում: Սոյն յօդուածի նպատակն է ահա մի համասօմ ծանօթութիւն սաղ Նեկրասովի՝ այդ շքեղ և թախծի մուսայի, կեանքի և գրական գործունէութեան մասին:

Նեկրասովի կեանքը թշուառութիւնների և նեղութիւնների մի ամբողջ օվկեան է ներկայացնում, դրկանքների մի ձիգ շղթայ, որ իւր բոլոր կողմերով շատ խրատական և ուսանելի է մեզ համար և որ իւր անջնջելի կնիքն է դրել նրա բանաստեղծական ստեղծագործութիւնների վերայ: 1821 թ. նոյեմբ. 22-ին է ծնուել Նեկրասովը Վիեննիցկիյ դաւառումն որակց զօրքի մէջ այդ ժամանակ ծառայում էր հայրը՝ Ալեքսէյ Նեկրասովը, իսկ մանկութիւնն անցրել է հայրենի կալուածքում, Նարոսլաւեան նահանգի Արեշնեօ գիւղում, Վոլգայի ափերին: Քէ, և կալուածատիրոջ որդի, բայց և այնպէս չափազանց ախուր և օնմխիթար կերպով էին անցնում նորա մանկութեան օրերը: Նորա հայրը իւր գեղեցիկ արտաքինին միացնում էր այն բոլոր բացասական կողմերը, որ երեւակայել կարելի է մի ուսս կալուածատիրոջ համար, բռնակալ, խրստատիրոս վերին աստիճանի կոպիտ, դաժան և անգութ, անասնական—զգայական ցանկութիւնների յեակեց ընկնող մի մարդ, որի մտածողութիւնը խաղաթղթերից, զուարճութիւններից ու քէֆերից այն կողմը չէր անցնում: Այն ինչ հօր կատարեալ հակադասակերն էր ներկայացնում բանաստեղծի մայրը (լեհուհի), մի կրթուած, մաքուր կին, բարոյական ու գաղափարական զգացումներով առողորուած՝ մի մարմնացեալ աւարքինութիւն, որ, սակայն, զոհ է գնում իւր իզեպական անարատ սիրոյն: Ահա այս երկու ծայրայեղ և անհաշտ բնա-

ւորութիւնների ազդեցութեան տակ կամոց կամոց կազմակերպուել է սկսում մանուկ բանաստեղծի հոգին և ըստ այնմ էլ ընթացք ստանում: Արդու դաստիարակութեան դործը ամբողջովին իւր վրայ է առնում մայրը և նրան իւր հակումների ու ձգտումների համադաստասխան կերպով առաջնորդում՝ այնպէս որ բանաստեղծը յետոյ Նէքսպիր ու Գանտէ կարգալու ժամանակ իրեն արդէն իսկ ծանօթ գէպերի և պատմութիւնների է հանդիպում: Եւ ահա մօր անմիջական հսկողութեան տակ դաստիարակուելով՝ ազագայ բանաստեղծը նրանից ժառանգում է այն բոլոր առաքինութիւնները, որոնք ապագայում պէտք է թելաչրէկն նրա կրակոտ և երբեմն քնքոյշ բանաստեղծութիւնները: Մօր ունեցած ազդեցութիւնը անպայման է, այդ մասին ինքը բանաստեղծը հրապարակով խոստովանում է. նրա հանրածանօթ «Мать» ղեկեցիկ պօէման, բացի գէպի մայրը տածած ամենանուիրական զգացումներից և որդիական սիրոյ սրբազան յիշողութիւններից, պարունակում է շատ աղերս, որոնք նրա մօր իւր վերայ ունեցած սիրանուէր հոգու խոր ազդեցութիւնն են պարզւում մեզ.

И если я пополнилъ жизнь борьбою

За идеаль добра и красоты,

И носить пѣснь, слагаемая мною,

Живой любви глубокия черты—

О, мать моя, подвигнуть я тобою!

Во мнѣ спасла живую душу ты!

Սակայն տաանց ազդեցութեան չին անցնում և հօր բոլոր արարքները, ինչպէս կտեսնենք յետոյ. նորա հոգու սև գծերից ևս ժառանգութիւն է ստանում բանաստեղծը:

Այնուհետև շատ վաղ (հօր զինուորական ծառայութիւնը թողնելուց և հայրենի կալուածքը քաշուելուց անմիջապէս յետոյ) ազագայ բանաստեղծը ահանատես է լինում այնպիսի քսամների տեսարանների, որտեղ ստրկական դրութիւնը իւր բոլոր արհաւիրքներով արտայայտւում է. ընդհարւում են ծնօղների անհաշտ բնաւորութիւնները, որից ընտանեկան ամուսնական երկպառակութիւններն են սկսւում կատարի զինուորականը իւր զայրոյթն ու մաղձը թափում է

ոչ միայն իւր ձեռքի տակ եղած ստրուկների վերայ այլ և հաւատարիմ ամուսնուէ այն ամուսնուէ որ իւր ամբողջ ապագան՝ հարստութիւնս ապահովութիւնս ծնողների սէր և գուրգուրանքս բերել նրա ոտքերի տակ էր գրել՝ զբաւուելով միայն նրա համակրելի արտաքինով և հեռակելով իւր սրտի թելադրութեանը. զուր չէ՛ որ բանաստեղծը յետոյ գառնութեամբ յիշում էր թէ «օրհասական ճնշման տակ է անցրել իւր մանկութիւնը»։—Նստանեկան շրջանում բարւոյ և շարի մրցմանը հանդիսատես լինելուց և կեանքի գառնութիւնները դեռ այդ փամանակից ճաշակելուց յետոյ՝ մի փոքր աշատ շունչ առնել է սկսում՝ Նեկրասովը երբ այդ յեղյեղուկ դրութիւնը փոխուում է և նա իւր փոքր եզրօր հետ Եարօսլաֆի գիմնադիան է ուղարկուում։ Սակայն երկար չէ մնում նա այդ գիմնադիայում. Ե. դասարանից արձակուում է՝ հաւանօրէն վարչութեան անդամների վերայ ծաղրական ոտանաւորներ գրելուն պատճառով, որոնցով աւելի էր զրոյցուում քան իւր գասերովն ու մտաւոր զարգացմամբ։ Այսպէս թէ այնպէս 1838 թ.-ին արդէն Նեկրասովը, ոտանաւորների մի հաստատեարակ կռնատակին, Պետերբուրգում է գտնուում՝ հօր յանձնարական նամակով պինուորական դպրոց մտնելու համար։ Սակայն ճակատադիրն այլ կերպ էր անօրինել. հանդիպելով իւր ընկերներից մէկին և նորա միջոցով ուսանողների հետ ծանօթանալով՝ Նեկրասովը շուտով համոզուում է թէ համալսարանական կրթութիւնն ինչպիսի մեծ աւաւելութիւններ ունի և նոցա դրդմամբ սկսում է պատրաստուել համալսարան մտնելու. հեռակալ տարին իսկ (39 թ.) նա իրաւունք է ստանում ազատ ունկնդիր լինելու։ Բայց նրա հայրը այնպիսի մարդկանցից չէր որ իւր որոշման հակառակ թողնէր որդուն թէկուզ իւր ներքին կոչմանը հեռակու. զայրացած՝ նա գազարում է այլևս նպաստ ուղարկելուց և 16 տարեկան Նեկրասովը Պետերբուրգում անօրնական և անտէր, իրեն կանգնած է տեսնում կեանքի անողոր պահանջների գիմաց՝ միայնակ։ Չվհատելով երբէք և բոլոր յոյօր միայն իւր վերայ դրած, նա գիշեր ու ցերեկ անգաղար աշխատում է զանազան ամսագիրների համար ոտանաւորներ է

գրում: արտագրութիւններ ու սրբագրութիւններ կատարում,
 դոցանով իւր գոյութիւնը պահպանում և միւնոյն ժամա-
 նակ համալսարանի դասախօսութիւններին էլ հետևում: Սա-
 կայն այդ տարիները նա սարսափելի կարիքների և նիւթա-
 կան մեծ կարօտութեան մէջ է անցկացնում: մի տաղնապալից
 թշուառ ժամանակաշրջան էր այդ նրա կեանքի համար, որ
 նոյն ինքն բանաստեղծի համոզմամբ և վկայութեամբ իւր
 դրոշմն է դրել նրա Ֆիլիքականի և նոյն իսկ բնաւորութեան
 հազմակերպութեան վերայ. «Ազդիղ երեք տարիս պատմում
 էր նա յետոյ, ես միշտ, ամեն օր ինձ քաղցած էի զգում:
 Այլ միայն վատ էի կերակրւում: ոչ միայն կիսակուշտ մնում
 այլ և ոչ ամենայն օր հաց գտնում: Քանիցս բանն այն տեղն
 է հասել, որ ես գնացել եմ Մորսկոյի վրայի բեստորաննե-
 րից մինը, ուր թոյլ էին տալիս լրագիրներ կարդայ, թէպէտ
 և ոչինչ չպատուիրէիր քեզ համար: Ե՛հ, վերջնում ես
 ջեթի համար լրագիրը իսկ ինքդ մօտենում ես հացի
 ափսէին և հացն ուտում:*) Այդ երկար ժամանակեայ քաղ-
 ցին դիմանալ չի կարողանում Նեկրասովի մարմինը. նա թու-
 լանում է Ֆիլիքապէս և անկողին մանում: բնականաբար
 այլևս աշխատել չկարողանալով, ամենտիրոջից է սկսում պարտք
 վերցնել: Բայց ասանտէրն էլ շուտով երես է դարձնում նրա-
 նից: Մի փոքր կազդուրութեւոց յետոյ նա բնկերներից մէկի
 մօտ է գնում և երեկոյեան վերադառնալով՝ ասն գոնեքը
 իւր առաջ փակ է գտնում. երկար զանդահարելուց յետոյ
 միայն գռան ետեւից պատասխանում են նորան, որ նրա
 սենեակումն արդէն ուրիշն է բնակւում իսկ պարտքի տեղ
 բաւականանում են նրա կայքով... Հոկտեմբերեան ցրտերին,
 մէտակ շորերով, առանց դրամի և օգնութեան՝ մենակ է մնում
 Նեկրասովը փողոցում, գնում է, ուր աչքը կարում է. վեր-
 ջապէս մի նստարանի վրայ նստում և քնում է. անշուշտ
 նա շուտով իւր վախճանը կը գտնէր (թէ և այս էլ առանց
 ազդեցութեան չի անցնում), եթէ պատահամբ մի աղքատ
 ծերունի չատենէր նրան և իւր տուն տանելով՝ չըպատասպա-

*) Стихот. т. I, Біограф. стр. XXX.

քէր այդ գիշեր: Իւր կեանքի այս տարիներն է յիշում բանասանդժը, երբ ակնորիներ է անում իւր ոտանաւորների մէջ, թէ «երկար ժամանակ քաղցած է մնացել», թէ իւր վրայ միշտ «բռնացել է կարիքը», «երիտասարդութիւնն անցրել է սանջող կռուի մէջ», և թէ այնպիսի կեանք է ունեցել, որի «պատմութիւնը և թէ մինչև վերջ կարդան, շատ սրանք կը ցնցուին»:

Նեկրասովի գրական գործունէութիւնը սկսում է նրա կեանքի հէնց այս տագնապալից շրջանից, այս ծանր տարիներին: Սակայն գուցէ նրա գրական գործունէութիւնը բոլորովին այլ ընթացք ստանար, այլ բնաւորութիւն կրէր, նրա ոտանաւորը խօսքի այն թափն ու կորովը չունենար, ինքն էլ այն մարդը չը դառնար, ինչ որ դարձաւ, և թէ չհանդիպէր այն ժամանակուայ ամենանշանաւոր գրագէտ — քննադատ Բէլինսկուն, և երուպական իմաստով վերցրած՝ ուսնալ և կրթուած այդ մարդուն, չը մօտենար նրան, նրա միջոցով էլ գրական այն շրջանի մէջ չը մտնէր, որ ժամանակի ուս ինտելիգենցիայի լաւագոյն անդամներից կազմուած մի ղեղեցիկ փունջ էր ներկայացնում: — Անոնաւոր կրթութիւն չստացած, ոչ մի դպրոցում մինչև վերջ չմնացած, համալսարանի դասախօսութիւններին անդամ լրիւ չյաճախած, ինքնակրթութեամբ էլ չպարապած (գորա համար պատ ժամանակ էր պէտք, որից զուրկ էր Նեկրասովը), — զարգացման կողմից նա շատ յետ էր մնացել շրջապատող առաջաւոր մարդկանցից: Բէլինսկու շրջանն ընկնելով՝ նա մէկէն տեսնում է այն մտաւոր անդունդը, որ իրեն բաժանում էր գրական այդ շրջանից, և սիրով ու եռանդով կաշում է իւր ուսման թերին և կրթութեան պակասը լրացնելու գործին, միշտ առաջնորդ ունենալով Բէլինսկուն:

Մօրից յետոյ Նեկրասովի վերայ ամենից աւելի ազդեցութիւն է ունեցել և առանձին տպաւորութիւն գործել Բէլինսկին. այս բարի ազդեցութեան պատճառով է, որ բանասանդժը այնքան սրտագին տողեր է նուիրում նրան, «մեծ ուսուցիչ» անուանում, ամբողջ կեանքի ընթացքում յարգանքով խօսում նրա մասին, խոնարհում նրա անուան և

յիշատակի առաջ: Նրա բոլոր խօսակցութիւնները Նեկրասովի
 համար գասախօսութեան նշանակութիւն են ունեցել:
 «Նա (Բէլինսկին) իմ մէջ առատ պարզեաւորուած մի բնու-
 թիւն էր տեսնուում, յիշում է բանաստեղծը, որին կրթու-
 թիւն և զարդացում էր պակասում: Եւ ահա հէնց զբա-
 շուրջն էլ պատում էին նրա ինձ հետ ունեցած զրոյցները,
 որոնք ինձ համար ուսուցման նշանակութիւն ունեին»:^{*)}
 Բէլինսկու Նեկրասովի համար ունեցած այդ ուսուցչական դերը
 և ազդեցութեան նշանակութիւնը աւելի որոշ երևում է
 մանաւանդ նորա Գորբոյիւբովի հետ ունեցած խօսակցու-
 թիւններից. «Յաւում եմ, նկատում է Նեկ, վերջինիս, որ
 դուք ինքներդ չէիք ճանաչում այդ մարդուն (Բէլինսկին): Ես
 ամենայն տարի աւելի և աւելի եմ զգում, թէ որքան ան-
 փոխարինելի է նորա կորուստը ինձ համար: Յաճախ տեսնում
 եմ նրան երազումս, և նա կենդանի կերպով պատկերանում
 է աչքերիս առաջ: Պարզ մտաբերում եմ ինչպէս մենք եր-
 կուսով մէկտեղ, մօտ մինչև գիշերուայ ժամի 2-ը՝ խօսակցում
 էինք զբականութեան և ուրիշ առարկաների մասին: Իրանից
 յետոյ ես միշտ երկար թախառում էի գատարկուած փո-
 ղոցներում, յուզուած արամազրութեամբ, *мыслью* ինչ համար
 նոր բան էր լինում նորա արարչայարած հոգեբէ մէջ...: Ինք
 զբականութեան մէջ էք մտել արդէն պատրաստուած, հաս-
 տատուն սկզբունքներով և որոշակի նպատակներով. իսկ
 ես... ես ժամանակ չունէի կրթութեամբս զբաղուելու. պէտք էր
 մտածել քաղցից չմեռնելու համար: Այնպիսի զբական շրջա-
 նում էի, որտեղ աւելի կարելի էր բթանալ, քան զար-
 գանալ: Իմ հանդիպումը Բէլինսկու ինչ համար կրկն-թեւ էր**...
 Ի՞նչ կլինէր, նա երկար ապրէր. ես այն մարդը չէի լինի,
 ինչ որ այժմս եմ.***), — վերջացրել է բանաստեղծն իւր խօս-
 քերը՝ յուզմունքից զոգացող և արտասուքից խեղդուող
 ձայնով: Սակայն Նեկ. Բէլինսկուով յափշտակուելիս, ողև որուեջ

*) Русское Богатство, № 12, էջ 32.

**) Русск. Бог. № 11, 33.

***) Ընդգծումները՝ մերն են.

է ոչ միայն նրա արտայայտած նոր մաքերով, կամ նրա կատարեալ եւրոպական կրթութեամբ, այլ և նրա աշխուհական հասկեր հոգով, մարդկային արժանաւորութիւններով: Այլ քեզ մարդ մարդ կամ ասում է: Այլ գուք կձանօթանաք, կտեսնէք ինչ հոգի է նա — հիացմունքով արտայայտած խօսքերը, որ ասել է Նեկրասովը Կոստոնտնուպոլսի վերջինիս Բէլլինսկու հետ ծանօթանալուց առաջ, ցոյց են տալիս թէ հոգուն ինչ փայլուն պատկեր է ունեցել Բէլլինսկին և ինչով ազդել իւր շրջապատողներէ վրայ: Նեկրասովը յիշում է նաև այն ծանր տպաւորութիւնները, որ թողնում էին իւր վրայ Բուսու շրջանի վերացական խօսակցութիւնները, այդ շրջանի անդամների սուս կեանքին և սուս ժողովրդին անտեղեակ լինելու պատճառով Նեկրասովի մասին ունեցած անթիւ գրոյցները: «Նա գիտակցում էի գրում է նա որ այդ ամէնը այն չէ, ինչ որ մեզ հարկաւոր է, բայց միևնոյն ժամանակ նոցա հետ վիճել չէի կարող, որովհետև նոքա ինչնից անհամեմատ աւելի շատ բան գիտէին, անհամեմատ աւելի կարգացել էին»:*) Նա այսպէս, գիտակցելով, որ իրեն այլ բան է հարկաւոր, նա սկսում է անչափ աշխատել սովորել: Սուս կեանքին քաջ ծանօթ էր նա՝ իւր կեանքն ամբողջապէս այդ ժողովրդի այդ բազմակարօտ ամբոխի մէջ էր անցկացրել: Ինչու էր նրան ձեռք բերել այն, ինչ որ իւր նոր ընկերներն ունէին, ինչ որ իրեն, նոցա հետ վիճելու համար՝ պակասում էր, և նա իւր բնատուր ընդունակութիւնների շնորհիւ և աշխատանքի մեծ եռանդով կարողանում է այդ թերին լրացնել:

Բէլլինսկու հումանական գաղափարներով և առաջադիմ լայն սկզբունքներով դեկավարուող գաղտնի իւր խոր կնիքն է գնում Նեկրասովի հոգու և մաքի վրայ. սուս ժողովրդին Գլխաւոր Գլխաւոր ծառայելու մղումը նա այդտեղից է ստանում: այդ գաղտնի, այդ շրջանում է ծնունդ առնում այն գաղափարը, թէ գրականութիւնը ժողովրդի և նրա կեանքի բազմակողմանի գծերը՝ զանազան ելեւէջները արտայայտողը

*) Миръ Божій № 12, էջ 16.

պիտի լինի, բուն կենդանի ժողովուրդը պիտի իրրև աղբիւր ծառայէ գրականութեան համար, և հէնց այդ ժամանակից են սկսում եթէ չենք սխալուած հանդէս գալ այսպէս կոչուած «Նարոզնիկները», որ յետոյ այնքան նշանաւոր են դառնում և որոնց կարասութաներից էր նաև ինքը Նեկրասովը:

Ձգադարելով երբէք իւր կրթութիւնն ու բանաստեղծական ձիրքը առաջ տանելուց և եփուելով կարիքի և նեղութեան դէմ վարած կռուի մէջ՝ Նեկրը վերջապէս իւր գործունէութեան համար մի այլ ասպարէզ ևս գտնում է, մի գործ, որ բացի բարոյականից՝ արդէն նիւթականապէս էլ վարձատրում է: Այդ նրա հրատարակչական գործն է: Սեպհական ոտանաւորների երկրորդ տետրակի (Степайки въ стихахъ) հրատարակութիւնը բաւական շահաւոր է լինում նորահամար: 45 թ.ին նա հնարաւորութիւն է ստանում երկհատոր մի ժողովածու, իսկ հետեւեալ տարին արդէն երկուսն ի լոյս հանելու:

Խնամքով խմբագրուած այս ժողովածուների հրատարակութեամբ, որ կազմուել էին մասնակցութեամբ ժամանակի ամենայայանի գրագէտների՝ Բէլինսկու, Իսկանդէրի, Տուրգենևի, Մայկովի, Գոստոևսկու, Գրիգորովիչի, և այլն, որոնք և այնուհետև նրա մշտական աշխատակիցները եղան — թէ Նեկրասովի անունն է հանրաժանօթ դառնում և թէ մէկէն ի մէկ նորա նիւթական գրութիւնն ասպահովուում: այնպէս որ 1847 թ.ին արդէն նա կարողանում է Պանաևի հետ «Современникъ» ամսագիրը գնել, որի խմբագրութիւնը վարելով և յիշեալ ականաւոր գրական դէմքերից դատ այլ յայտնի ուժեր ևս աշխատակցութեան հրաւիրելով՝ այդ ամսագիրը գրական այնպիսի նախանձելի բարձրութեան է հասցնում և այնպիսի յարգի արժանացնում, որ այնպիսի մինչև այդ ժամանակ չէր ունեցել և պահեց այնուհետև մինչև իւր դադարումը (1866 թ.): Խմբագրական պաշտօնին վարժուելով և նրանից ձեռք վերցնել չկարողանալով, «Сов.»-ի դադարումից երկու տարի յետոյ նա «Отечественныя записки» ամսագրի հրատարակութիւնն է կապալով վերցնում, որն և նրա ձեռքի տակ դառնում է ուղիղ շարունակու-

Թիւն Современникъ-ի: Իբրև խմբագիր և գլխաւոր աշխատակից այդ երկու առաջադէմ ամսագիրներէ, Նեկ-ը իւր բնաւորութեան յատուկ դժերը—անպայման շիտակութիւն և աշնուութիւն—դնում է գոցա մէջ, որով այդ ամսագիրները ուսն ինտելիգենցիայի բերան և հասարակական կարծիքի ղեկավար են հանդիսանում և ընթերցող հասարակութեան ընդարձակ շրջանների մէջ մտնում, մանաւանդ որ յօգուածների ընտրութիւնը, ինչպէս վկայում է խմբագրութեան անդամներից մէկը, Նեկ-ի նման «ի բնէ խելօք» էստետիքական և քննադատական զգացողութեամբ զօրեղ կերպով վարգացած մարդու զրշի տակից էին անցնում:

Սակայն որքան էլ մեծ լինի Նեկ-ի կատարած դերը, իբրև հիմնադիր և ղեկավար ուսն լաւագոյն երկու ամսագիրների որպիսի անմուտց անուն էլ թողած լինի նա ուսն ամսագրների պատմութեան մէջ, այնուամենայնիւ այսօր նա փառաբանւում և իւր ազգակիցների լուրջ ուշադրութեանն է արժանանում ոչ իբրև խմբագիր, այլ իբրև Բանաստեղծութիւնը նա իբրև իւր գործունէութեան գլխաւոր առանցքն էր ընդունում: Որի շուրջն այնուհետեւ պիտի պատէր նրա կեանքի անիւր, և նրա միակ ցանկութիւնն ու պահանջը ժամանակակիցներից հէնց այն էր, որ իրեն քննադատէին և դնահատէին նախ և առաջ իբրև բանաստեղծի՝ մի իղձ, սակայն, որ ոչ միայն կենդանութեան ժամանակ, այլ և այժմ մահուանից 25 տարի յետոյ, դժուար թէ կարելի լինի իրագործուած համարել:

Նեկրասովը զրական հրատարակ դուրս եկաւ զոգողոց քայլերով, հաղիւ 16—17 տարեկան պատանի, Ն. Ն. տառերի տակ թարքնուած, „Мечты и Звукъ“ խորագիրը կրող գրքոյիով: Հացի խնդրի ստիպմամբ հրատարակած երեսայական ոտանաւորների այս փոքրիկ տետրակը ժամանակին քննադատուեցաւ ամենախիտա գրչով. Բէլիւսիու հեղինակաւոր խօսքը թէ՛ անտանելի է միջակութիւնը ոտանաւորի մէջ, —ամէն ինչ վճռում էր. նոյն իսկ Նեկ-ի ամենասիրելի պոֆեսսորը՝ իմանալով որ յիշեալ բեռնիւրի հեղինակը իւր

ունկնդիրներէ մէջն է, դատախօսութեան ժամանակ, բոլոր ուսանողներէ առաջ, ամենակծու ակնարկներով ծագրում է նրան և յայտարարում, թէ այդ գրքոյի մէջ «ոչ տաղանդի նշոյլ կայ՝ ոչ խմբայ ոչ ներգաշնակութիւն, այլ միմիայն ջուր և դատարկ յանգերի թխուածք»*: Նոյն խիստ դատաւճախն է կենթարկւում և նրա ստանաւորներէ երկրորդ գրքոյի (Статейки въ стихахъ): Երիտասարդ բանաստեղծը այդ խիստ քննադատութիւններից թէև վրդովւում է, բայց չի յուսահատուում. մանկութիւնից անդուլ աշխատանքի սովորած՝ նա նորից աւելի հռանդով աշխատանքին է կաշուում իւր համոզումն ու ներքին կոչուած քննադատներին և սխտութանել տալու համար, և այդ բանը նրան շուտով յաջողւում է. Բէլինսկին, այդ մեծ քննադատն ու գեղեցկագէտը, որ Նեկի ստանաւորներէ բ. գրքոյի ձակատին էլ «վողովիլային շաղփաղփութիւն» անունն էր դրել, շուտով խոստովանում է, որ Նեկի-ը բանաստեղծ է, այն էլ էական բանաստեղծ, երբ վերջինս իւր ներսում խօսող ձայնին տկանջ դնել է սկսում և իւր բանաստեղծութեան համար այն աղբիւրին է դիմում, որ իրեն քաջ ծանօթ և սրտին շատ մօտ էր: Նեկրասովի նշանաւոր «Въ Дорогѣ» ստանաւորն էր, որ այգպէս միանգամից փոխեց խիստ քննադատի կարծիքը:

Արդ, ո՞րն է այն աղբիւրը, որից նիւթ առնել սկսեց բանաստեղծը. ի՞նչ բովանդակութիւն տուեց նա իւր քնարին:

Я призванъ былъ воспѣть твои страданья,
Терпѣньемъ изумляющій народъ -

տողերից երևում է, որ Նեկրասովը այն զգացումն է ունեցել, թէ կոչուած էր ոուս ժողովրդի ցաւը, տառապանքները երգելու: Բայց ինչո՞ւ յատկապէս «տառապանք»-ի երգիչ պիտի լինէր նա, ո՞րտեղ են ամփոփուած այդ զգացման արմատները և ի՞նչպէս ու ի՞նչ ցաւ ու տառապանքներ է երգում նա:—

* Міръ Божій 12, էջ 21:

Ինչպէս տեսանք՝ ցաւ տանջանք և գառնութիւն էր ներկայացնում՝ Նեկրասովի անձնական կեանքը, նեղութեան և աշխատանքի մի հսկայական բևռ որի ծանրութեան տակ սպանել է նա մանկութեան տարիները, կեանքի տօնական շրջանը: Նրա հայրական տունը մի թափառաբեմ էր, որանդ հանդէս էին բերում մարդկային զաւանութիւնները իրենց բոլոր ստոր արտայայտութիւններով, ցուցադրում մոլի կըքի վայրագ պահանջները, կոպիտ ուժի յաղթանակը, ստանալով արւում և՛ խիզ՛, և՛ սրբութիւն և այն ամէնը, ինչ որ նուիրական է մարդու համար, ընտանիք չէր գա, այլ մի կատարեալ սպանդանոց՝

Гдѣ рой подавленныхъ и трепетныхъ рабовъ
Завидоваль житью послѣднихъ барскихъ псовъ,
Гдѣ научился я терпѣть и ненавидѣть...
Гдѣ отъ души моею, доврѣменно растлѣнной,
Такъ рано отлетѣлъ покой благословенный,
И не ребяческихъ желаній и тревогъ
Огонь томительный до срока сердце жогъ¹.

մի դժոխք էր գա, որանդ

Вторилъ звону чашъ и гласу ликованій
Глухой и вѣчный гулъ подавленныхъ страданій².

Այս բոլորը կատարւում էր բանաստեղծի առաջ ... և բնականաբար ազդու բողոք պիտի սնուցանէր նորա ներսում: Նա կեանքի հէնց սկզբից վիրաւորուած մի սիրտ էր, յիշում է Գոստոևսկին, և հէնց նորա այդ էրբէք+չարագլուշ վէրքն էր սկիզբ և ազդուր նրա ամբողջ՝ չափազանց տառապալից, բանաստեղծութեան բոլոր կեանքի ընթացքում, 3: Ինքը Նեկրասովն էլ նոյնն է հաստատում. «Իւրաքանչիւր գրող հակառակորդներին տալիս է այն ինչ որ ինքը խորապէս զգացել է. քանի որ երեսայութիւնից ինձ վիճակուել

1. СТИХОТВ. т. I, էջ 35:

2. նոյն, էջ 37:

3. նոյն, Біогр. էջ XVIII.

է անոնել ուսու զիւղացու տառապանքները ցրտից, սովից և ամէն անասակի խստութիւններից, ուստի և ես իմ բանաստեղծութիւնների համար մտախններ եմ վերցնում նրանց միջավայրից: Եւ իրօք նա իւր ստանաւորների համար սկսում է «մտախններ» հանել իրեն այդպէս քաջ ծանօթ ժողովրդի զբիւններով լի իրական կեանքից: Այո, նրա մանկութիւնից ստացած խոր «վէրքը» նրա անցուցած անկարգ կեանքը, նրա ծածուկ թափած դառն արցունքները, սիրող և առաքինի մօր դալիահար դէմքը, հօր գազանութեան ենթակայ ճօրտերի և գիւղացիների լալահառաչ ձայները, նոցա սրամորմօք հեծկտանքները նրան ոգևորում, թե են տալիս սոցա արդար դատը պաշտպանելու, իբրև մարգարէ՝ նոցա տառապանքներն աշխարհին յայտարարելու, բռնութեան դէմ ազդու բողոք բարձրացնելու, և նեկ իւր այդ պարտքը կատարում է ամենայն սրբութեամբ, առանց ուշադրութեան առնելու ընկերակիցներից ոմանց «բարեկամական խորհուրդը»:

Пускай намъ говорятъ измѣничивая мода,
 Что тѣма старая—, «страданія народа»,
 И что поэзія забыть ея должна,—
 Не вѣрьте, юноши! не старѣетъ она.

Այսպէս անելով և բանաստեղծութեան մասին այս հայեացքն ունենալով, նա իւր մարգարէական դերը կատարել է սկսում հէնց հայրենի տանից: Քշուռառներից և տառապող խեղճերից մէկը և առաջինը նեկ-ի մայրը՝ գազան ամուսնու ձեռքին խողալիկ դարձած այդ առաքինութիւն էր, և ի՛նչ քնքոյշ տաղեր էին նշուխի նուիրական սիրոյ բուռն արտայայտութեամբ լի քնարական ստանաւորներ է նուիրում նորա անարատ յիշատակին: որպիսի դառն վշտով պատկերացնում նորա տրտում վիճակը, խաբուած սէրը: Ամէն ինչ ձգած, «օտար երկիր» եկած այդ սրբութիւն շրջապատող ազականեալ մթնոլորտում օրաուր թառամում է. արհամարհուած և մոռացուած բոլորից մաշուում է այն անձը, որին ինքը պարտական է համարում այն ամէն բանով, «ինչ որ սուրբ է և լաւ» իր համար. նրա «դահիճն է դառնում այն անձը, որին և՛ սէր

և ջահիլութիւնն և կամք — ամէն ինչ նուիրել էր»¹ մի բանտ է դառնում նրա համար ամուսնու տունը, ուր իւր սե բաղդը ողբալով մնում է մինչև գերեզման, իւր «վիճակը ճորտի լուութեամբ տանելով», «ամբողջ կեանքը առանց սիրուելու անցկացնում», միշտ «կատաղած փոթորկի» առաջ, «իւր կրճքով պաշտպանելով սիրելի գաւակներին», մինչև որ վերջապէս «փոթորկը» փրթում է, և նա «առանց շարժուելու հարուածն ընդունում» լուռ, վեհանձնութեամբ փշուժ է շունչը՝ իրրև «ամենամաքուր սիրոյ աստուածութիւն»²:

Բանտ ներկայացնող հայրենի յարկի տակ նոյն բաղդն է ունեցել և բանաստեղծի քոյրը՝ «անխօս նահատակի» և՛ «ցաւը և սարսափելի վիճակի նախատինքը» կրելով, նա հօր բռնի կամքով իւր սպազան տալիս է այն մարդուն, որին չէր ձանաչում և չէր սիրում» բայց նա պատուով տանում է իւր այդ ծանր խաչը և իւր մօր տխուր վիճակը աշխարհիս վերայ երկրորդելով՝ գերեզման է իջնում «այնպիսի սառն և խիստ ժպիտ երեսին, որից կը սարսէր նոյն ինքն դահիճը»³: Այնուհետև բանաստեղծը աւելացնում է, որ այնտեղ իրենց տանը «ինչ որ մի բան ճնշում էր բոլորին», որ այնտեղ «մեծի և փոքրի սիրտը անձկութեամբ արօրուում էր», մինչդեռ նոյն պատերի մէջ հօր կեանքն անցնում էր «անպտուղ և դատարկ», «խնջոյքների, անմիտ պարճենկոտութեան, անառակութեան, կեղտոտ և սաօր բռնակալութեան մէջ»⁴: և որ բոլորը տանջւում էին այստեղ, միշտ ողբի ազդակներ, հեծեծանքներ ու խոր հառաչանքներ էին լուում:

Только тотъ одинъ, кто всѣхъ собою давилъ,
Свободно и дышалъ, и дѣйствовалъ и жилъ 5.

Հայրենի տան պատերից դուրս ևս, հէնց նրա պատու-

1. Стих. I. էջ 208:

2. Նոյն՝ էջ 209:

3. Ст. I, 36:

4. Ст. I, 35:

5. Նոյն, 37:

հանների առաջ՝ Նեկրասովն ականատես էր եղել ժողովրդի ախուր կեանքի շատ մուժեղ և անմխիթար կողմերին, դիակել, ինչպէս նրա հօր ոտքերի առաջ ընկած՝ ամբողջովին ցեխի և արեան մէջ շողախուռած, քարշ էր քշուցալիս և ողորմութիւն հայցում մի որեւէ գիւղացի. կամ թէ ինքը շատանգամ հօր «անասնձ բարկութեան բռնկումներից» խոյս ապուով, ծանր օրերն անց էր կացրել բուն գիւղացիների մէջ, որակող ընդհանուր ճնշումը, ընդհանուր ցուրդ այնպէս սերտ կերպով մօտեցրել էր նրան այդ վրկուռած և հարստահարուած դասին: Միւս կողմից, շատ մօտ գանուելով Վոլգային, մանկութիւնից նա լսել էր բուրլակների (նաւաբարշ) ախրագին երգերը, ականջ խլացնող նրանց ծանր հառաչանքները: Աւստի Նեկրասովն լաւ հասկանալով աշխարհի կարգերը և այն գիտակցութիւնն ունենալով թէ՛ մինչ «երջանիկները լուս են բարիք անելում և անբաղդներին կարեկցելում», նա՛, «ով հիւանդ է ինքը, ուրախութեամբ և ազահարար ականջ է դնում հիւանդի մասին լսած տեղեկութիւններին», ինքն ևս իրբէ մէկը այդ հիւանդներից և բաղդապուրկներից՝ շատ վաղուց վշտի սովոր իր քնարը գործ է դնում ընկձուռածների դատը պաշտպանելու: Նա մտքով սլանում է դէպի Վոլգայի ափերը, ողջոյն է ասնում հայրնի գետին, բայց իրբէ պատասխան բուրլակների խուլ հառաչանքներն է լսում՝ միացած ցաւալի իրականութեան հետ. «կորացած, գլուխները համարեա ոտքերին հասցրած, փոկերի մէջ փաթաթուած, կեղեի արեխը (лапоть) հագներին, գետի երկայնութեամբ շարէ շար սողում էին բուրլակները: Աւ լուութեան մէջ լսողոց նոցա յուզարկաւորման չափաւոր հառաչք անտանելի կերպով վայրենի էր և զարհուրելի կերպով պարզ»: Նրան սարսափեցնում է բուրլակի «խոժու, հանդարտ և հիւանդոտ» դէմքը, «ախրագին և վշտալի» տեսքը, «յանդիմանութիւն կարդացող խաղաղ—անյոյս հայեացքը և ուժաթափ դիմադժերը»: արդար զայրոյթ է շարժում նոցա «վաստակարեկ դէմքի վերայ նկատուող միշտ միեւնոյն անվերջ հլու

Հնազանդութիւնը: Մարդկանց ամբողջ սերունդներ են ապրում և կորչում անհետ առանց իրենց զաւակներին մի դաս թողնելու. «անձայն մեռնում է նա, անյայտ կորչում»: Կամ մահուան անկողնում գեռ մրմնջում. «եթէ ամողջանար ուստ արջի նման կը քաշէի գեռ լանջափոկս»: Եւ համբերել չի կարողանում բանաստեղծը, դառնապէս լաց է լինում և իւր «որբան» հայրենի գետին ծանր թախծով «ծորտութեան և վշտի գետ» է անուանում:

Մտամոլորչ, անհուն վիշաք կրճբի տակ, դժբաղդութեան այդ բուն փայրերից երեւոյթութեամբ առաջ է անցնում նա՝ տեսնում, ինչպէս «աշխատանքի խաղաղ որդիքը» հողը սուղում են իրենց քրտինքով և արիւնով, եզի նման օրու գիշեր աշխատում են՝ նոցա հետ մեկտեղ երեխայք, նոյն իսկ յղի կանայք գործի դիմում, բայց և այնպէս վերահաս վտանգից, սովից աղաաւել չեն կարողանում. չափազանց աշխատելուց թուլացած երկրագործը սովի ձեռքից աչք չէ բաց անում, «մշտական աշխատաւորը սոված է մնում»: իսկ այս բոլորի պատճառն այն է, որ երկրագործը իւր փառասկի տէրը չէ.

Весь народъ—работникъ мой!

Лѣто, осень убиваются . . .

Имъ не нужно ничего! . . .

Самъ не сѣю и не жну,

Что родить земля имъ, матушка,

Все несутъ въ мою казну!

Գիւղացու քրանաջան աշխատանքի պտուղը կալուածատերն է տանում. «կալուածատէրը չարագործ է», «կառավարիչը՝ կեղեքիչ, յայտնի յափշտակող»: Իսկ սոցա բոլոր արարքների դիմաց գիւղացուն մնում է միայն ուժերը լարել, մի կողմից տէրերի փորը լեցնել, միւս կողմից իւր ողորմելի գոյութիւնը պահպանել. և այդ ժամանակ հող չէ թէ լււում է «մարդկային արեան և արցունքների բողբոջը» և թէ «ուժից վեր աշխատանքը հիւժում է», վերջ ի վերջոյ անկողին ձգում նրան: Իսկ այնտեղ դաշտում հասած արան է

սպասում նրան՝ հասուն հատիկները գետին թափելով:

Не для того же пахаль онъ и сѣялъ,

Чтобы насъ вѣтеръ осенній развѣялъ —

իրենց տրտուենքն են մրմնջում հասկերը. իսկ քամին նոցա պատասխան — „вашему пахарю моченьки нѣтъ“ գոյժն է տանում. որովհետև նա վարել է բայց ուժի համեմատ է աշխատանքը տարել. սպառած է նա անօգնական, հիւանդութեան որդը նրա վիրաւոր սիրան է կրճում, մինչև որ նա ցմահ աշխատելուց, աղքատ ապրելուց յետոյ իւր խոնջացած անդամներին հանդիստ է տալիս յաւիանանականութեան գրկում. . . . Աւ քանի՛ քանիսն են այսպէս աշխատանքի ծանրութեան տակ մէջք կոտրել, քրտիքի տեղ արիւն թափել իրենց սնուցանող դաշտերում, և կամ ձմրան ցրտին թիփու մէջ խեղդուել, խոր ձիւնի մէջ անհետ կորել: Հայրենի երկրի իւրաքանչիւր վայր տխուր յիշատակների հետ է կապուած բանաստեղծի մտքում. «Գարեկամ մինչև ծնկներս արեան միջով ենք անցնում» — դառնացած բացականչում է նա. մտրդագետիկներովն ես գնում՝ քամին է ականջիդ փսփսում — ցուրտ է, օտարական, ցներտ, անասունովն ես գնում՝ գաղանն է ունում՝ սով է. հացը նուազ է՝ ցրտիցն է, տուարը թոյլ է՝ սովիցն է: Գիւղացուն հարցնում ես՝ «տա՞ք ես ապրում», — «ցուրտ է», պատասխանում է. «լա՞ւ ես ուտում, խմում», — «սով է»: Գիւղացին կնոջը ծեծում է, գինետուն է զընում՝ «սովից»¹: Եւ այս բոլորն ընդհանուր է ամբողջ երկրի համար: Այս զգացման տակ բանաստեղծը հայրենիքին է դառնում՝ ցոյց տալու իրեն այնպիսի մի վայր, որտեղ նրա սերունդանն ու պահպանը չը տառապէր. «այդպիսի անկիւն ես չեմ տեսել», վրայ է բերում բանաստեղծը և թուում, որ հեծում է նա դաշտերում, ճանապարհներին, բանտերում, հանքերում. . . . հեծում — տառապում է նա իւր իսկ սեպհական աղքատիկ խրճիթում²: Եւ երբ գիւղացին իւր կիզքիչների արիւնը ծծողների գէմ պաշտպանութիւն

1. Стих. II, էջ 46, Пѣсня убогаго странника.

1. Стих. от. I, էջ. 260:

խնդրել, իւր արդար դասը ուր պէտք է լսելի անել է կամենում, գուռն ամուր շրխիցով նրա երեսին փակում են, գլխիկոր յետ դարձնում՝ իրենց հանգիստ քունը չխանգարելու այն ժամին, որ ուրիշների ծառայութեան համար է սահմանուած 1: Իսկ գիւղացին յոյսը կարած, ճնշուած անողոր կարիքի և ընդհանուր ջաւի աակ, սյդ բոյորը մուսացութեան ապուռ մի միջոց է գտնում միայն՝ գինեաուն գնալ, որովհետև իւրաքանչիւր գիւղացու

Душа—что туча черная—

Гниѣвна, грозна—и надо бы

Громамъ гремятъ оттудова,

Кровавымъ лить дождямъ,

А все виномъ кончается.

Կամ այսպէս են արամորանում

Намъ подобаешь пить!

Пьемъ—значить, силу чувствуемъ!

Придетъ печаль великая,

Какъ перестанемъ пить!...

Այս տեսակէտից ուշադրութեան արժանի է բանաստեղծի «Кому на Руси жить хорошо» յայտնի պօէմայի լուծումը. 70-ական թուականներին, դեռ այդ բանաստեղծութիւնը չաւարտուած՝ Աւստրիական հետաքրքրում է իմանալու, թէ հեղինակը ո՞ւմ պիտի երջանիկ համարէ, և ի մեծ զարմանս իւր լսում՝ Նեկի-ի պատասխանը՝ «արեցողին»։ Այսպէս, մտիթարական ոչինչ չգտնելով, բանաստեղծը իւր խօսքը կրկին Վոլգային ուղղելով՝ բացականչում է.

Волга! Волга! Весной многоводной

Ты не такъ заливаешь поля,

Какъ великою скорбью народной

Переполнилась наша земля.

Անշուշտ այս ընդհանուր թշուառութեան ընդհանուր առաւապանքի նկարագրից գուրս չպիտի մնար նաև ուսս կնոջ

վիճակի «ամբողջ սարսափի», «նախատական գերութեան» նկարագիրը: Մօր պատկերը առաջն էր շարունակ. նա նկատում է, որ մինչ «ամէն ինչ աշխարհում մի քանի անգամ փոխուել է, ուստի կնոջ գրութիւնը նոյնն է մնացել», ցաւելով յիշում է, որ կենսունակութիւն արտայայտող կնոջ գէմքին յանկարծ երևում է «բութ համբերութեան արտայայտութիւն և անմիտ մշտական երկիւղ», որ «սե ու գժուար աշխատանքից» նա գեռ չծաղկած թառամում է՝ աւելացնելով նաև այն հանգամանքը, որ ամուսնու ուժը միայն կնոջն է պատում. շատ անգամ նա իւր բարկութիւնը կնոջ վրայ է թափում, չարիքի պատճառ նրան համարում և անխնայ ծեծում, և ոչ ոք չի պաշտպանում ծեծուողին. „много по́боя не долго болят“ (խօսքերով մանրխմներն ու ծնօղները յուսադրում — մխիթարում են նրան: — Իսկ ի՞նչպիսի օրեր են սպասում դարձեալ կնոջը ամուսնու մահից յետոյ, երբ որբիկների և ամբողջ տան հոգսի ծանրութիւնը նրա ուսերին է մնում միայն: Այդպիսի մի անբաղդ ընտանիքի պատկեր է տալիս Նեկի-ի ընտիր ռոտանաւորներից մէկը (Смерть крестьянина): Մեռնում է ընտանիքի սիւնը, միակ աշխատաւոր տղամարդը, թողնելով ծերունի ծնօղներին դառն կսկծի՝ ամուսնուն ու զաւակներին յուսահատ անաէրութեան մէջ.

Береза въ лѣсу безъ вершины —

Хозяйка безъ мужа въ дому.

Նա գիտէ, որ իրեն համար շատ սև օրեր են պահուած, որ իրեն ոչ ոք չի խղճայ. և հէնց առաջին օրից դաժան իրականութիւնը իւր ամբողջ սարսափով գունն է դալիս: Զմեռ է, բայց տանը մի ծղան անգամ փայտ չունի փառարանը վաւելու. երեխաներին հարեանին պահ տալով, անտառ է ելնում փայտ բերելու. այդտեղ իւր անօդնականութիւնն ու միայնութիւնը աւելի որոշ պատկերացնելով՝ նա սիրաբ թեթեացնելու համար լացին է դիմում, իսկ անտառն անմասնակից նրա ցաւին՝ ականջ է դնում, ինչպէս հառաչանքները դուրս էին թռչում, ձայնը երկար ձգւում և գողում էր և արեւը... երկնքից անտարբերութեամբ դիտում այրու

ճանր տանջանքները¹։ Այնուհետև և՛ փայտ է ջարդում
և իւր ապագայ վիճակն ու անելիքը մտքի առաջ բերում,
թէ ինչպէս մենակ իւր վար ու ցանքը պիտի անէ, խտհոհուն-
ձից արտհնչին հասնէ, ցերեկուայ տապին արտում խուր-
ձեր կապէ, խրձերի մէջ արտասուէք ձգէ։

Тотъ сердца въ груди не носилъ,

Кто слезъ надъ тобою не лилъ — *խօսքերով վերջա-
ցնում է բանաստեղծը իւր ախուր նկարագիրը։*

Անուշաղիբ չէ թողնում նեկ և գիւղացի մանուկնե-
րին․ այն ողբալի մանուկ-թիւնը, որ նա էր անցրել, չէր կա-
րող, ի հարկէ, չը գրղել նրան սուս մանուկների նոյնպիսի
անտանելի վիճակի արտայայտիչը լինելու։ Այն տարեկանից
երեսամները իրենց ծնօղների հետ գործի են գիւղական աշ-
խատանքներին մասնակցում կամ գործարանում իրենց թո-
քերը մաշում են․․․ Ապշեցնում է բանաստեղծին 6 տարե-
կան մանուկի հօր հետ անասուից փայտ բերելու տեսարանը,
աչքերին հաւատալ չի ուղում, որովհետև

Ребенокъ былъ такъ умирительно малъ,

Какъ будто все это картонное было,

Какъ будто бы въ дѣтскій театръ я попалъ²։

Աւելի սարգ և յուզիչ կերպով արտայայտում է երե-
խաների ցաւն ու արտունջները *Плачь Дѣтей* ռոմանսորը։
Մինչ ամէն մի կենդանի շունչ իւր ջահելութեան ոսկեայ
ժամանակաշրջանում ուրախութիւնների և զուարճութեանց
է հետամուտ լինում՝

Только намъ гулять не довелось

По полямъ, по нивамъ золотымъ:

Цѣлый день на фабрикахъ колѣса

Мы вертимъ—вертимъ—вертимъ!

Պատում է անիւրը, զլուխներն էլ հետը պտտցնելով, ամէն
ինչ շրջում է նոցա աչքում, սրաները թաթում—

Погади ужасное круженье! — *գոռում են երեխաները,*

1. Стих. т. II, 102:

1. նոյն, էջ 21:

Дай намъ память слабую собрать;
 Безполезно плакать и молиться,
 Колесо не слышитъ, не шадить:
 Хоть умри—проклятое вертится,
 Хоть умри—гудить, гудить, гудить!

Գործից դուրս էլ մի ապահով տեղ չունին իրենց ան-
 հաստատ քայլերն ուղղելու, խոնջացած անդամներին հան-
 գրատու թիւն տալու. տանն էլ նոցա հանդիպում է «հոգսն ու
 կարիքը»:

Тамъ, прижавъ усталой головой
 Къ груди блѣдной матери своей,
 Зарыдавъ надъ ней и надъ собою,
 Разорвемъ на части сердце ей ...¹

Լաց են լինում մանուկները:

Այս ձևով թեև մենք կարող էինք դեռ երկարել մեր
 խօսքը և կրկին այնպիսի ռոմանտորներ առաջ բերել, որոնց
 մեջ երևար ուս կեանքի ուրիշ շատ մնայլ կողմերն և ս
 սակայն այսքանն էլ բավական է դազավար կազմելու համար,
 թե ինչպիսի բնաւորութիւն էր տուել Նեկրասովը իւր բա-
 նաստեղծութիւններին: Մեր նպատակն էր միայն ընդհանուր
 գծերով առաջ բերել Նեկր-ի քնարի վշտահար՝ ժողովրդի
 տառապանքներին նուիրուած կողմը և համոզել, որ նա
 իրօք կոչուած է եղել իւր համբերութեամբը դարմանք
 պատճառող ժողովրդի տառապանքները երգելու: Յիրաւի
 նա առաջին հեղինակներէից էր, որ «... ժողովրդի երանի
 կեանք իւր բոլոր խաւար կողմերով ամենայն պարզ-ութեամբ՝
 այն աստիճան պարզ, որ թշնամիները «իրաւորող պարզու-
 թիւն» էին անուանում—բանաստեղծութեան նիւթ դար-
 ձրեց, և նա առաջինն էր, որ բանաստեղծութեան մեջ ճե-
 րտած—աննդենցիա—մտքեց: Սակայն հենց այս հանդամանք-
 ներն են պատճառ, որ Նեկրասովն այնքան թշնամիներ է

1. СТИХ. т. II. 22:

վաստակում, այնքան կրքոտ յարձակումների ենթարկուում:

Զխօսելով Նեկի երիտասարդական զրչի արդիւնքների, նրա տաղանդի երեխայրիքի մասին, որ, կարելի է ասել, ամբողջ ուսու դրականութեան կողմից մերժուեցաւ և որից ինքը բանաստեղծն էլ յետոյ հրաժարուեց, — գանուեցան քննադատներ և մեծ հեղինակներ, որոնք Նեկրասովի տաղանդի ամենավայելուն շրջանի ստեղծագործութիւնների, ընտիր ոտանաւորների մեջ անգամ բանաստեղծութիւն չէին տեսնում:

Տուրգենևը «զրոշի արժողութիւն» չի ապիս նորա բանաստեղծութեան, Տոլստոյը նրան «բանաստեղծական շնորհից բոլորովին զուրկ» է համարում: մի երրորդի կարծիքով «բանաստեղծութիւնը մինչև անգամ չի էլ դիշերել նրա ոտանաւորներում», և ըն և ըն: Բայց միւս կողմից մենք տեսանք, որ Բէլինսկու նման հռչակաւոր քննադատը թէպէտ ամենախիստ կերպով էր վերաբերուել Նեկի առաջին ոտանաւորներին, խոստովանեց, որ յիրաւի Նեկի բանաստեղծ, այն էլ խկական և տաղանդաւոր բանաստեղծ է, և այնուհետե միշտ ուղղութիւն էր ապիս նրան, հիացմունքով խօսում նրա հետադհետ, լոյս տեսնող ոտանաւորների մասին: Արիտասարդ քննադատ Գորբովիւբովը Պուշկինից, Լերմոնտովից և Առլցովից անմիջապէս յետոյ՝ նոցա կողքին և նոցա շարքում, Նեկրասովին է գնում, իբրև ինքնուրոյն և բանաստեղծութեան մեջ նոր հոսանք մնցնող բանաստեղծի: Պիսարևի նման ուղղամիտ քննադատը իւր ժամանակին ուշադրութեան արժանի միայն Նեկրասովի ոտանաւորներն է համարում և յանձնարարում կարդալու: Սալաիկովը, որի հետ և շատ ուրիշները, նրան «ուսաց դրականութեան մեջ մեծ մարդ» են անուանում: Գոստոնսկին (իւր դասընկերական ճառում) Պուշկինից և Լերմոնտովից անմիջապէս յետոյ է գնում, իսկ հազարաւոր ձայներ սոցանից էլ բարձր են համարում նորան:

Եթէ ընդունենք անգամ, որ վերջին դէպքում խօսել է առաւելագլխա զգացմունքը, և միտքը մի կողմ է քաշուել վշտալի իրողութեան զիմաց, մնում է դարձեալ մեջտեղ այն փաստը, որ մինչ շատ անուանի և հեղինակաւոր քննադատներ ու արուեստագետներ Նեկրասովին բանաստեղծ

չէն համարում, ընդհակառակն շատերը ոչ պակաս հեղինակաւոր՝ նորան Քեթ Բանաստեղծ են համարում: Ինչն է այս տարօրինակ երևոյթի պատճառը. հարկաւ ինչպէս ակնարկեցինք վերը՝ գեղարուեստի մասին ունեցած տարբեր հասկացողութիւնը: Առաջինները, նեկի տաճարներին մէջ բանաստեղծութիւն չդանոցները՝ զուտ գեղարուեստի երկրպագուներ էին, հեռեողներ արուեստը արուեստի համար է միայն՝ սկզբունքին. իսկ միւսներն՝ հակառակորդները՝ չէին բաւականանում «Թուշու՛նի երգով» արուեստի մէջ նպատակ էին դնում արուեստը ծառայեցնում էին ժողովրդին: — «Թող տուր, բարեկամ, կառապանների սէր երգելի և այն ամէնը, ինչ որ գեղջիկական և ականջ ծակող մի սխալ է այդ ... հաւատա՛ մեզ, որ այնպիսի բէալականութիւն, որպիսին օրինակ քո „Вдуг—ль по улицѣ“ տաճարին մէջ կայ, կխրանեցնէ բոլորին, որոնց էստեախքական ճաշակը զարգացած է: Արբասողծութիւն (профанація) է նկարագրել հասարակական կեանքի ժահրոտ կողմերը ...»¹ — բարեկամարար խորհուրդ էր տալիս Տուրդեններ (նորա հետ և Բոակինը): Սակայն միւս կողմից ոչ պակաս անուանի արուեստագէտներ բանաստեղծութեան համար այլ պահանջներ էին դնում. «Մեր ժամանակի ողին այնպիսի է, զբում էր Բէլինսկին 1843 թ., որ ամենազետ ստեղծագործական ոյժը կարող է միայն առ ժամանակ հիացնել՝ եթէ սոհմանափակուի «Թուշու՛նի երգով», ստեղծելով ժամանակի պատմական և վիկիտոփայական իրականութեան հետ ոչինչ ընդհանուր բան չունեցող մի առանձին աշխարհ, եթէ երևակայէ՝ թէ երկիրն անարժան է իրեն, թէ իր տեղը ամպերի վերայ է, թէ աշխարհային տառապանքները և յոյսերը չպէտք է վրդովնել իւր խորհրդաւոր երազներն ու բանաստեղծական տրամագրութիւնները: Այդպիսի ստեղծագործական ոյժի արտագրութիւնները, որքան էլ ահաղին լինին, կեանքի մէջ չեն մտնի, հիացում և համակրութիւն չեն զարթեցնի ոչ ժամանակակիցներին, ոչ էլ յաջորդ սերունդներին մէջ ... Ստեղծա-

Գործո-նեան արարո-նիւնը հեշտո-նեամբ համայայնում է ժամանակի «գո-ն» Ժառայելու գործին «... գորա համար հարկաւոր է լինել, քաղաքացի իւր հասարակութեան և իւր դարի դաւակ իւրացնել նորա շահերը՝ իւր ձգտումները նրա ձրգտումներին միացնել, գորա համար հարկաւոր է համակրանք սէր, ճշմարտութիւնն իմանալու գործնական առողջ զգացողութիւն, որ համոզումները՝ գործից, զրուածները՝ կեանքից չի բաժանում»¹: Չերնիշևսկին մի քայլ առաջ է անցնում Բէլինսկուց. «Գեղեցիկը՝ կեանքն է»—վճռականօրէն պնդում է նա և այն միտքը պաշտպանում թէ արուեստը շօշափելի օգուտ պիտի տայ ժողովրդին. հակառակ դէպքում մերժում է նրա նշանակութիւնը: Մտածող մարդու ուշադրութեանն արժանի բովանդակութիւնը միայն կարող է, ասում է նա, արուեստը փրկել այն նախատինքից, թէ դատարկ զուարճութիւն է այն: Աոկ գեղարուեստական ձեւը արհամարհանքից կամ կարեկցական ժպիտից չի փրկի արուեստի արտադրութիւնը, եթէ այդ արտադրութիւնը իւր բովանդակած գաղափարի կարեւորութեամբ չի կարողանայ այս հարցին պատասխան տալ. արժէ՞ արդեօք աշխատել այդպիսի դատարկ բաների վերայ: Անօգուտ բանը իրաւունք չունի յարգուելու... Սէր, սէր և միշտ սէր նկարագրելու սովորութիւնը ստիպում է բանաստեղծներին մոռանալ, որ կեանքը մարդուն ուրիշ անհամեմատ աւելի հեռաքրքրող կողմեր ունի»²:

Նեկրասովն ահա այս կարգի մտածողներից էր և արուեստի ու բանաստեղծութեան վերայ սոյնպիսի հայեացք ունէր. նա «քաղաքացի» էր, «իւր հասարակութեան և իւր դարի դաւակ», «իւր շահերը նրա շահերին էր միացրել», նա և՛ «համակրանք ու սէր» ունէր դէպի հասարակութիւնն ու ժողովուրդը և «առողջ ու գործնական միտք»՝ ճշմարտութիւնը հասկանալու և գնահատելու, և նա չէր մոռացել, որ «կեանքը մարդու համար անհամեմատ աւելի հեռաքրքրող կողմեր ունի», քան միայն կնոջ սէր երգելը: Այս տեսակէտից էլ

1. Сочин. Бѣл. VI, էջ 209 և 219. Миръ Божій, 16.

2. М. Б. № 12, 17:

նրա տուած պատասխանը իւր խիստ քննադատներին շատ
 որոշակի պարզում է նրա հայեացքը. «Պարոններ, առար-
 կում է Նեկ-ը Տուրգենևի և Բոակինի դէմ, թերևս արդարա-
 ցի լինի ձեր պահանջը իմ ոտանաւորների վերաբերմամբ, եթէ
 էստետիքական խիստ հայեացքի տեսակէտից նայենք նրանց
 վրայ. բայց դուք մոռացել էք մի բան, որ իւրաքանչիւր գրող
 տալիս է այն ինչ որ ինքը խորապէս զգացել է: Եւ բա-
 ցատրելով, որ երեսայութիւնից տեսել է «ցրտի սովի և
 ամէն տեսակի խստութիւնների» ենթակայ ուսու զիւզացու-
 «տառապանքները», ցոյց է տալիս թէ ինչու իւր ոտանա-
 ւորների համար «մոտիւններ» է վերցնում հէնց այդ իրեն-
 քաջ յայտնի միջավայրից: Եւ միշտ հաւատարիմ իւր
 այս գաւանանքին՝ այնուհետեւ իւր ամբողջ կեանքի ընթաց-
 քում ներշնչման այդ աղբիւրին է զիմում, նորանից նիւթ
 առնում, ցոլացնում իւր բանաստեղծութիւնների մէջ մշտ
 իրական կեանքը, առաւելապէս նրա մռայլ և վիրաւոր կող-
 մերը, որից հրաժարուելու այնքան յորդորում և խորհուրդ
 էին տալիս յիշեալ «բարեկամները»: Նա առանց քաշուելու
 հարուածում է բոլոր նոցա, որոնք չեն համապատասխա-
 նում իւր պահանջած չափին, իւր գաղափարական համո-
 զումներին:—Արտայայտելով խեղճերի և թշուառների ցաւն
 ու դառն տանջանքները՝ նա այդ բոլոր չարիքների ար-
 մատները նոցանից դուրս բարձր շրջաններում է գտնում,
 և նոցա դէմ էլ արձակում է իւր շանթերը: Նա շատ կծու
 երգիծանքով խայթում է տառապանք պատճառողներին,
 «աշխատանքի խաղաղ զաւակները» անդորր կեանքը գառ-
 նութեան ծով դարձնողներին. նա ուղղակի կաւում է և այդ
 կռուի մէջ ոչ թէ մտրակի այլ ինչպէս շատ ճիշտ կերպով
 նկատում է քննադատներից մէկը, մուրճ է բանեցնում, և
 մուրճի ուժգին հարուածներ է տալիս, կրակ թափում
 զրկանքներ հասցնողների, արդարութիւնը անխիղճ կերպով
 ոտնահարողների վերայ. նորա այս կարգի ոտանաւորները
 մանաւանդ վայլում են ոչ այնքան բանաստեղծական վսեմու-
 թեամբ, որքան զգացմունքի բուռն արտայայտութեամբ, ներ-
 քին կորովով, ուժեղ թափով.—մի յատկութիւն, որի արժէքը

Թշնամիներն անգամ խոստովանում էին: Ժամանակակից շատ բարձրաստիճան անձինք, կալուածատերեր, ղիրքի և պատուի տէր մարդիկ իրենց ճիշտ պատկերն էին անտեսում Նեկի-ի երգիծական ոտանաւորների մէջ, և այդ է պատճառը որ նա այնքան շատ անձնական թշնամիներ ունէր: Ահա նորա՝ կեանքն այսպէս իւր ամբողջ «վիրաւորող պարզութեամբը» արտայայտելու գէտ էր, որ այնպէս ջերմ կերպով բողոքում էր արիստոկրատ Տուրգենևը, որից, սակայն, հրաժարուել չյօժարեց երբէք Նեկրասովը: Մի արի և քաջամարտիկ մտքի զօրավար էր նա, որ իւր փայփայած գաղափարների համար ինքնամոռացութեան հասնող ողևորութեամբ կուիւ էր հղում: շատ անգամ նոյն իսկ վայելչութեան սահայդպէս երբևի՜ն յախուռն կերպով առաջ վարողը, նա չէր կարող անվրդով հոգւով և հանգիստ սրտով նկատել ու նկարագրել այն ամէնը, ինչ որ իրական կեանքը նորա առաջն էր գնում:

Мнѣ борьба мѣшала быть поэтомъ,
Пѣсни мнѣ мѣшали быть бойцомъ

տողերը լաւ բնորոշում են նորա թէ գործունէութեան եղանակը, թէ բանաստեղծութեան բնաւորութիւնը, Նեկրասովը սոսկ բանաստեղծ կամ սոսկ մարտիկ չէր, այլ երկուսը միասին: Զուր տեղը չէ, որ նա իւր մուսային թախծի և վրէժի անուրն է տուել. թախիժ, առապանք, թշուառութիւն ու նեղութիւն էր երգում և վրէժ լուծել աշխատում նրա կորովի գրիչը: Եւ անհեռանք շանցան իդէալիստ բանաստեղծի ջանքերը, իւր փառաւոր նպատակին նա մոսամբ հասաւ շուտով:

Մեր խօսքը վերջացնելուց առաջ չմոռանանք, սակայն, մի հանգամանք ևս յիշելու, որ շատ աւելի խոր վիշտ և դառն կսկիժ էր պատճառում բանաստեղծի վիրաւոր սրտին, յուզում նրա միտքն ու հոգին, քան ամենախիստ և չարաշուղում նրա միտքն ու հոգին, քան ամենախիստ և չարամիտ քննադատութիւններն անգամ: Գրագէտներ գանուեցան, որոնք Նեկրասովի գործը, նորա բանաստեղծութիւնները ըստ

կամս քննադատելով, նոցա գրական—բանաստեղծական ար-
ժանիքը մոռանալով և հեղինակի անունը հոյի հաւասարե-
լով չբաւականացան, այլ աշխատեցին թափանցել նրա դադա-
նի խորհուրդներն աշխարհը, մանեւ նրա սրտի խորքերը, շոշա-
փել նրա հոգու թելերը, որպէսզի՝ բանաստեղծի զգացումների
աղնուութիւնն ու համոզման ճշմարտութիւնը բմբունելուց և
ճանաչելուց յետոյ՝ այդ գաղանին ու մեզանից ծածուկը և
նրա բանաստեղծութիւնների միջոցով մեզ յայանի եղածը
կողքէ կողք դնելով, երկուսի հակասութիւնը և նորա յայտ-
նած գաղափարների կեղծ լինելը ցոյց տալ կարողանան: Աւ ահա
մի բրոշիւր է լոյս տեսնում (69 թ.), որով Նեկի ի միջ ժըխ-
տում են ամէն ինչ, սկսած մարդկային ամենանուիրական
զգացումներից ու արժանաւորութիւններից — աղնուութիւն, համոզում, ճշմարտութիւն, արդարութիւն և լին, — մինչև բա-
նաստեղծական ընդունակութիւնը: Այնուհետև շատ շատերն
էին դժգոհութիւն յայտնում և գանգատուում, որ նա «խրս-
տասիրտ» ու «դաժան» է, որ միայն նրա «խօսքերի միջ
զգացմունքի բոց կայ», որ նրա «ոտանաւորն ամբողջովին
սէր է, իսկ սիրտը սառն է ինչպէս քար», և որ, ուրեմն,
նրա բանաստեղծութեան ամբողջ բովանդակութիւնը «կեղծ»
է՝ այն չէ, ինչ որ իւր ներքինն է: Նա թշնամանում էր
այն բանի համար, որ բանաստեղծութեան միջ աննպնցիա
է մտքի, հալածում՝ իբրև անխնայ մերկայնող և հարուա-
ծող, իբրև ալատամտական հովերով տարուած մէկը, և լին:
Այս ամէնն, ի հարկէ, խոր ցաւ ու վիշա էր պատճառում
բանաստեղծի զգալուն սրտին, վրդովում նրա միաքը, թու-
նաւորում կեանքը, բայց այդ վեւ ոչինչ էր իւր իսկ սեպ-
հական խղճի խայթի և յանցաւորութեան զիտակցութեան
առաջ՝ յանցաւորութիւն, որ մի շարքազգ զէպքից էր ա-
ռաջացել:

Ուստի գրականութեան համար տազնապալից տարի
էր 66 թ., որ կործանում ու մահ էր սպաւնում նաև նրան.
Նեկրասովն այդ ժամանակ իւր „Современникъ“-ն էր հրա-
տարակում, և ահա նա գոնէ իւր այդ ամազիրը վերկելու
համար մի շողքորթական ոտանաւոր է գրում ու նուիրում

գրաւք Մուրախինն և մի ժողովարանում նորա ու հաւաքուած բարձուժեան առաջ հանդիսաւոր կերպով կարգուէ: Ասկայն նեկ-ի՝ իւր ամազգրի սիրոյն յանձն առած ստորացումն ոյժ չի ունենում փրկելու „СОВ“.-ը, և նրա հրատարակութիւնն էլ արդելում է: Իսկ այս գէպքն այնուհետեւ մտօրի փաթաթան է գաւնում թշնամիների համար՝ նորան իրքե շողորորթ, քուս անձնական գծուծ շահի յետեից ընկած մէկը ներկայացնելու, ինչպէս յիշեալ բրոշուրի հեղինակներն (Անտանովիչ և ժուկովսկի) էին արել: Ահա այս գէպքն է, որ հանդիսա չէ տայիս նորան և որդի պէս ուտում, մաշում է նրա սիրաբն ասնջում խիղճը աւելի՝ քան թշնամիներէ բամբասանքներն ու գրագրատութիւնները:

Что враги? пусть клеветуютъ язвительнѣй,
 Я пощады у нихъ не прошу,
 Не предумать имъ казни мучительнѣй
 Той, которую въ сердцѣ ношу.

Եւ պէտք է նկատել, որ նեկ-ի հոգին ճնշող և վզոր-վող պատճառ ի ծնէ եղել է նորա մէջ, իւր ծնողներից նրա ժառանգած (հարկաւ ոչ հաւասար չափով) երկու միմեանցից բոլորովին տարբեր գծերը միանալով՝ ծնունդ են տայիս բանաստեղծի հոգեկան մարտին, միմեանց վերայ գերիշխել աշխատում: Այս է պատճառը, որ բուն, զուտ նեկրատովեան բանաստեղծութիւնների կողքին երբեմն հանդիպում ենք այնպիսի առղերի որոնց գոյութիւնը տարօրինակ է և խորթ նեկ-ի ոտանաւորների ամբողջութեանը, որոնք և անհասկանալի կճնային մեզ, եթէ նրա հոգու առանձնայատկութիւններն ի նկատի չունենայինք: «Կարելի է մտածել, գրում է Міръ Божій-ի յօդուածագիր Ա. Կրանիխիկը, որ այն բոպէին, երբ նեկուայ նեկրատովը թղթին էր յանձնում իւր փայփայած խոհերը, թաքուն սննտակ էր մտնում Նիկոլայ Ալեքեևիչը և բանաստեղծի ոտանաւորներին աւերացնում իւր բարի ցանկութիւնը»: — Իւր հոգու այդ սե կողմի զխասկցութիւնն է պատճառ, որ բանաստեղծն այնքան անգամ՝ զղջացել, զղջման արտասուքներ է թափել: Նրա յաճախ զիմուճը հայրենիքին՝ «ժողորվրդի հեա ունեցած ընդհանուր մի կաթիլ արեան համար» իւր մեղքերը, իւր յանցանքները ներելու, ինչպէս

և այն խոստովանութիւնը, թէ «սպրել է առանց սիրելու»՝ մեղաւոր և փրաւոր սրտի յալահառաջ ձայներ են: Իսկ հետեւեալ դանդառները, թէ 30-րդ դարնանը հասնելով՝ իրեն համար դէժ հարստութիւն է՝ զիղել, որ «տխմարները նրա ոտքերի մօտ սողային» իսկ խելօքը այդ ժամին նախանձել կարողանար: Նեկրասովի հոգու այն արտայայտութիւններից են որոնց մէջ երևում է «Ալեքսէեիչը» որոնք սակայն նսեմանում են նրա շարունակ հնչող զղջման երգի և իրեն դատապարտող տողերի դիմաց: Եւ Նեկ-ի հոգու այս ստանձնայտակութիւնը ամենեին նրա արժանիքը վայր չի ձգում: Ընդհակառակն, հէնց այն հանգամանքը, որ մօրից ժառանգած նրա արհիւ սիրան ու հոգին շարունակ կսիւ են մղում հօրից մնացած բացասական կողմերի դէմ և միշտ յաղթանակով դուրս գալիս՝ շատ բարձրացնում է Նեկ-ի արժանաւորութիւնը:

Այսպէս թէ այնպէս, Նեկրասովի կտարած գեղը ուսու ժողովրդի վիճակի բարելաւութեան գործում անպայման օգտակար և անուրանալի է. նրա վառ ցանկութիւնն էր, որ «հայրենիքը կանգնէր ուղիղ ճանապարհի վրայ», և ինքը հայրենիքի ազատութիւնը շտեմած՝ գերեզման չիջնէր, «հայրենի դիւղի հողմը նրա ականջին մի ձայն հասցնէր, որի մէջ չսուէր մարդկային արեան և արատաւքների եւ ուումը»¹: Յանուն «ազատութեան մեծ զգացման» և մարդկային հաւասարութեան դադափարի անընդհատ կսիւ վարեց նա, տառապեալների, սարկացածների արդար դատի պաշտպանութեանը նուիրեց իւր «փէժի և թախծի մուսան», մինչև որ «ցանկայի ժամը» հասաւ, և նա իւր սպասած պայծառ օրը անսնելու արժանացաւ: Եւ այսպէս մեծ բարենորոգումների համար ճանապարհ հարթողներից և նախակարգապետներից մէկը հանդիսանալով՝ ցոյց տուեց որ

Кто, служба великимъ цѣлямъ вѣка,

Жизнь свою всецѣло отдаетъ

На борьбу за брата—человѣка,

Только тотъ себя переживетъ².

Ս. Տէր Պօղոսեան.

1. Стих. II, էջ 11:

2. Նոյն III, էջ 373: